

FUOCO SACRO

Հ Ա Ռ Ի Ր Ս Ո Ւ Ի Ր

Վեր. եւ Սիր. Միիր. Հայրերսմ

Ai Rev.mi e Carissimi Padri Mechitaristi

Or che i pampini rossi il vento porta
 Via ne l'erma laguna
 Come i vecchi ricordi del mio core
 Travolge l'ora morta,
 E con pianto a me noto il lido piange,
 E de le prime nevi nel candore
 Vedo i monti brillare,
 M'è dolce, o Padri, il vostro focolare.

È un focolare ov'ardon luminose
 Tre fiamme sacrosante:
 Quella che un dì Gesù venne a portare,
 Fiamma di Carità che tutto vince,
 Purifica e rinnova, e in cielo ascende;
 La fiamma de la Scienza alta ed umile,
 Che anela ai soli de le intatte cime,
 Ma per recarne un raggio
 A le offuscate menti
 Giù ne la valle bruna;
 E de la Patria la fiamma sublime:
 Onde qual faro splende l'isoletta
 De la vostra quiete, o Padri Armeni,
 E a fratelli pel mondo atro dispersi
 Par de la Patria l'occhio vigilante,
 Par de la Patria il core,
 Che per ognuno ha un palpito d'amore.

Oh! benedetti voi che questo fuoco
 Sacro serbate, come pie Vestali,
 Su la tomba del Padre che lo accese,
 E con le chiare lampade aspettate
 Lo Sposo che verrà nel gran mistero
 D'una notte, fra canti nuziali!
 Voi non temete: E un inno il cimitero
 Vostro, è sfida a la morte:
 Sui cipressi alti e fieri in faccia al verno,
 A le tempeste, al mare,
 Dolce piove de li astri il lume eterno,
 Passa fremendo un vol di candid' ali:
 E i cari ultimi fiori
 Incensan di Maria l'immagin bella,
 Mentre il Padre, le braccia a lei distese,
 Con lagrime sospira:
 « Guarda i tuoi figli, o matutina Stella! »

Oh letizia perfetta
 Che qui godono in pace i vostri cuori!
 Da le lotte infinite
 Brandelli sanguinosi porta il vento,
 Come le rosse foglie de la vite,
 E spegne altere faci e arditi rai

Արդ որ քամին անշուշտ
 Որթի կարմիր տերևներն
 Իւ կը տանի դէպ ի լըճակն ամայի,
 Ինչպէս սրբոխ յիշատակներն հինաւորց
 Վերիվարեց մեռած ժամն,
 Իւ ծովափն ինձ ծանօթ լացով մը կու լայ,
 Եւ կը տեսնեմ որ առաջին ձիւներու
 Պայծառութեամբ կը շողան բարձր լեռներն,
 Ինձ քաղցր է, ո՛վ Հայրեր, ձեր քաղցր է օստիւն:

Սճախ մըն է ուր կը վառին լուսացայտ
 Երեք բոցեր սրբբանուէր.
 Այն՝ զոր բերաւ երբեմն Յիսուս, Բոց Միրոյ,
 Իր կը յաղթէ ամէն բանի, կը մաքրէ
 Կը նորոգէ և կը թելէ վեր երկինք.
 Գիտութեան Բոցը՝ բարձր ու հեզ, որ կ'անձկայ
 Արեւներուն անմատչելի զագաթանց,
 Բայց բերելու համար ճանճանչ մ'անտոցմէ
 Մտառախլապատ միտքերուն
 Մինչև նրսեմ հովտին խորն.
 Եւ Հայրենեաց վրսեմ Բոցն,
 Որով կըղզեակը ձեր անթոյթ կը ցույց
 Ձերդ փարոս, ո՛վ հայ Հայրեր,
 Եւ կը թըլի օեւ աշխարհի վրայ ցիրցան
 Եղբայրներուն՝ Հայրենիքի աչքն արթուն,
 Եւ կը թըլի Հայրենիքի զգայուն սիրտն,
 Իր ամենուն ալ համար
 Իւնի թընդին մը սիրոյ:

Ո՛հ, օրհնեալ դուք, որ կը պահէք հուրն այս սուրբ,
 Ձերդ բարեպաշտ Վեստիաններ,
 Ձայն վառող Հօր՝ շիրմին վրայ,
 Եւ կը սպասեք լապտերներով պաղպաջուն
 Փետին՝ որ գայ, գայ պիտի
 Մեծ խորհուրդին մէջ գիշերի մ'երջանիկ
 Հարստենեկան երգերով:
 Դուք չէք խիթար. Օրհներգ մ'է ձեր դամբարանն,
 Իր ասպարէզ կը կարգայ
 Մահուան, և պերճ նոճիներուն վրայ ճօճճեմ
 Հանդէպ ձերան, մըրրիկներուն ու ծովուն,
 Ատողերուն լոյսն յաւերժիկ
 Կ'անձրէն քաղցրը շողով.
 Ձինջ թեւերու թռչի մը կ'անցնի սարսուռուն.
 Եւ անուշազ հուսկ ծաղիկները վերջին
 Մարիամու կը խընկեն դէմքը չըթնաղ,
 Մինչ Մըրիթար թեւերն Անոր կարկառած
 Կը հառաջէ լալազին.
 « Որդիներուդ նայէ, ո՛վ աստղ աւետեան »:

Ո՛հ օեւն եւ սերտ ցընծութեան
 Ձոր կ'ըմբռնեն հոս ձեր սրբերն՝ անդորրէկ.
 Կը տանի հողն արիւնեարանգ պատառներ
 Ահուս՝ անվերջ մարտերու,
 Ինչպէս որթին տերեւիկները կարմրուկ,
 Եւ կը մարէ խրոխտ ջահերն
 Իւ ճանճանչները ժըպիրհ

1. Մըրիթար Աբբաւոր. (Մ. Թրթ.)

Che scrutavan li abissi e il firmamento:
 Voi non temete: Nei vostri sereni
 Occhi si specchian le fiamme ideali
 Del fuoco sacro che non more mai!

P. Giuseppe Donati C. SS. Red.

Ho scritto questi poveri versi sotto le soavi impressioni che ho provato durante il mio ritiro, nell'insigne Monastero dei benemeriti Padri Mechitaristi nell'isola di S. Lazzaro, in Venezia. Devo confessare che in questi ottimi Padri, che tanto mi hanno edificato con la loro piet  e divozione, specialmente nel celebrare il Divin Sacrificio e nel cantare le lodi del Signore, ho veduto rivivere lo spirito del loro grande e santo Fondatore il Padre Mechitar, che di tutto cuore mi auguro di veder presto elevato all'onore degli Altari.

Questi versi servano in qualche modo ad esprimere ai carissimi e indimenticabili Padri Mechitaristi i sensi pi  sinceri della mia gratitudine per la caritatevole e gentile ospitalit  prestatami e per il bene che mi hanno fatto col loro esempio.

Հետագօտիչ անդունդներուն ուերկընթիւն:
 Դուք չէք խիթար. ձեր աչուըները զբարթ
 Հայլիներ են զազափարի բոցերուն,
 Սըբբանըւէր կրակին՝ որ չի մեռնիր քնաւ:

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ Հ. ՅՈՎՍԷԿ ԴՈՆԱՏԻ

Գրեցի այս կամեառ ոտանաւորը այն քաղցր սեւ-պատուութեան տակ՝ զորս ունեցայ իմ հոգեոր կրթութեանս ատեն, Վենետից Ս. Ղազար կղզւոյն քաղմերախա Միխիթարեան Հայրերու նշանաւոր Մենաստանին մէջ: Պէտք է խոստովանիմ, որ այս ընտիր Հայրերուն մէջ, որ այնքան շինութիւն եղան ինձ իրենց բարեպաշտութեամբ և շրմնոանդութեամբ, մասնաւորապէս աստուածային Ողջկիզման և ժամերութեանց պահուն, տեսայ որ կը վերապրի իրենց մեծ և սուրբ Հիմնադրին Հայր Միխիթարայի հոգին, որուն բոլոր սրտով կը մարթնիմ որ փութով բարձրանայ խորաններու պատուոյն:

Այս ոտանաւորս որ և է կերպով մը թող ծառայէ՛ յայտնելու համար սիր. և անմոռանալի Միխիթարեան Հայրերուն՝ իմ երախտազիտութեանս անկեղծազոյն ըզ-զացունները, որ մարդասէր և ազնիւ հիւրասիրութիւն մը ցոյց տուին և իրենց օրինակովը ինձ բարեք ըրին:

Փ Ա Ռ Ռ Ի Ե Ս Տ Ա Կ Ն Ե Ր Ը

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ա Գ Է Տ Ը

(Շար. տես Բազմ. 1921 էջ 329)

Ուրիշ քայլ մը զէպի լ լաւագոյնը յայտնի է այսօր նաև տգէտներու աչքին:

Հիները կը նկարէին այն՝ զոր պիտէին և ոչ թէ այն՝ զոր կը տեսնէին: Արտադրելով, օրինակի համար, հեռաւոր ծառ մը, և որովհետև անոնք զիտէին թէ ան տերևներով զարդարուն է՝ զանոնք մի առ մի կը գծագրէին, մինչդեռ այդ ծառն իրենց աչքերուն կ'երևէր իբր կոճղէ մը վեր բռնուած կանաչկեկ բիծ մը: Նկարելով տուն մը՝ խնամքով կը նշանակէին կըղ-մինտրները, պատուհաններն ու դուռները թէպէտև այդ սուրբ հեռուէն իրենց աչքերուն կը թուէր իբր ճերմակեկ ուղղանկերն մը: Այս պատճառաւ նախնեաց նկարներուն մէջ կը տեսնենք մենք դաշտանը-կարի մը հեռագոյն կողմին մէջ մացառի մը դալարին շարքերը, մէկմէկ նշանակուած, ծառի մը ճիւղերը, որ պարտէր պատկե-

րանալ հորիզոնին վրայ լաւ շարուած, իբր թէ ան երկու քայլ միայն անդին ըլլար և մինչև իսկ լուսինն ու արևը՝ վարսաւոր ճաճանչով: Մէկ խօսքով մտաց աչքն էր որ արուեստագէտին կ'առաջնորդէր, ոչ թէ քնախօսականը:

Ծառ մը ունի տերևները, լաւ ուրեմն տերևները միշտ պիտի ըլլան, նաև երբ հեռաւորութիւնը մասնաւորապէս անտեսանելի դարձնէ զանոնք. տուն մը կըղ-մինտրներով, պատուհաններով, զաներով ամբացած է, լաւ ուրեմն այդ մանրամասները միշտ պիտի ըլլան՝ նաև երբ հեռաւորութիւնը զանոնք իբր խառնէ:

Այդ շինժու արուեստ մ'էր՝ որ նկարէն կը վերցնէր բանաստեղծութիւնն՝ որ առաջ կու գար բնական դաշտանկարէն. մանուկ արուեստ մ'էր՝ որ խեղդբանջներու և սնուտի նրբութեանց մէջ կը կորսուէր: